ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 30-Լ

«26» 05 2026 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N 49 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը սահմանելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 30-ի N 20 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի հունիսի 5-ի թիվ 49 հրամանի հավելվածի 23-րդ կետում լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կետով նախատեսված 12-ամսյա ժամկետը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ նախաքննության կամ դատաքննության փուլում գտնվող քրեական վարույթով (գործով) կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում պարզաբանման ենթակա հանգամանքները կարող են նշանակություն ունենալ կարգապահական վարույթով վերջնական որոշում ընդունելու համար: Նշված դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը վարույթ հարուցած անձի կողմից կարող է երկարաձգվել մինչև տվյալ վարույթներով վերջնական դատական ակտի օրինական ուժի

մեջ մտնելը և դրա հիման վրա՝ կարգապահական վարույթով վերջնական որոշում կայացնելը:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ